թիւնից: Ես այն տեսակ անկողին չէի տեսել իմ կեանքում: Գլուխս փափուկ բարձի վրայ դնելը եւ աչքերս փակոելը՝ միեւնոյն րոպէում կատարոեցան:

Գիշերոայ կէսին ես զարթեցայ. սաստիկ ծարաւ էի: Վանայ աղի տառեխը ուտելը հեշտ բան չէ, այն եւս գիշերը: Բայց մեծ եղաւ իմ զարմանքը, երբ տեսայ, որ Ասլանը դեռ քնած չէր: Նա նստած էր աշտանակի հանդէպ, որի վրայ վառւում էր իւղային ճրագը: Ինչ-որ գրում էր:

— Այդ ի՞նչ ես գրում, — հարցրի նրանից:

— Նամակներ, — պատասխանեց նա: — Վաղը առաւօտեան մեր թղթատարը մեկնելու է...

Արդեօք դէպի ո՞ր կողմը, արդեօք ո՞ւմ պէտք է նամակ տանէ, — այդ մասին նա ոչինչ չխօսեց:

— Եթէ որսորդին գրելու լինես, իմ կողմից ողջունիր, — խնդրեցի նրանից:

— Լաւ, — ասաց նա եւ շարունակեց իր գործը:

Ես նկատեցի, նա չէ ուզում, որ ես նրան խանգարեմ: Լուռ կացայ: Քունը փախաւ իմ աչքերից: Անկողնիս մէջ պառկած, մի առանձին ապշութեամբ նայում էի Ասլանի վրայ: Նա երեւում էր ինձ որպէս մի մարմնացած գործունէութիւն: Բայց ի՞նչ նպատակի համար էր գործում այդ անխոնջ, մշտապտոյտ ուժը, ես հասկանալ չէի կարողանում: Փետուրեայ գրիչը երբեմն թղթի վրայ սլանում էր, որպէս նրա սրաթռիչ միտքը, իսկ երբեմն նա շարժւում էր դանդաղ, շրջանկատ կերպով, որպէս հեռատես զգուշութիւն: Եթէ ես վեր առնէի այն նամակներից մէկը, անտարակոյս, կարդալ չպիտի կարողանայի, թէեւ նրանք գրուած էին հայոց տառերով եւ հայերէն լեզոով: Գրելու այդ ձեւը ես յետոյ սովորեցի, դա պայմանական մի ձեւ է, որ միայն նամակի գրողին եւ ստացողին է յայտնի:

Ասլանը գրում էր: Ես շարունակում էի նայել նրա վրայ, եւ միեւնոյն ժամանակ զանազան մտածութիւններ զբաղեցնում էին իմ անփորձ գլուխը: Այդ մտածութիւններն այնքան խառն, այնքան անկապ էին, որ անկարելի էր նրանցից մի որոշ եզրակացութիւն դուրս բերել: Իմ երեւակայութեան մէջ, որպէս անրջական տեսիլքներ, պատկերանում եւ դարձեալ աներեւութանում էին այն փոփոխութիւնները, թէ որքա՜ն անգամ եւ որպիսի՛ տարբեր կերպարանքներով այդ խորհրդաւոր երիտասարդը յայտնել էր ինձ: Երբեմն տեսնում էի նրան արաբական մինարեթում, այն ամայի, մշտալուռ աւերակների մէջ, իր աւազակային խմբով, բոլորուած բոցավառ փայտակոյտի շուրջը, անքուն սպասում էին, որ գիշերային խաւարը թանձրանայ, որ ճանա-